

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին: Նախորդ տարվա մարտի 23-ին ընդունված օրենքով՝ 29-րդ հոդվածը լրացվել է 7.1-ին և 7.2-րդ մասերով, ըստ որոնց սահմանվել է այն անձանց ցանկը, ովքեր իրավունք ունեն գտնվելու ավագանու նիստերի դահլիճում, ինչպես նաև նախատեսվել է, որ լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են առանձնացված հատուկ տեղում, իսկ ավագանու նիստերի դահլիճ կարող են մուտք գործել Երևանի քաղաքապետի կամ նիստը վարողի թույլտվությամբ: Ավելացվել է նաև լրագրողների հավատարմագրման անհրաժեշտությունը: Ընդ որում, օրենքի այս փոփոխությունների վերաբերյալ իրավական որևէ հիմնավորում չի ներկայացվել<sup>1</sup>:

Ժողովրդավարական երկրների փորձը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմիններում լրագրողների, ինչպես նաև քաղաքացիների մուտքն ազատ է, քանի որ խոսքը գնում է ոչ թե պետական կառավարման, այլ համայնքային, տեղական ինքնակառավարման մասին: Հասարակությունը, ինչպես նաև հասարակությանը տեղեկատվություն հաղորդող զանգվածային լրատվության միջոցները պետք է իրավունք ունենան ներկա գտնվելու համայնքի ավագանու նիստերին, լուսաբանելու և հրապարակային դարձնելու համայնքին հուզող բոլոր խնդիրները:

Լրագրողների համար առանձնացված տարածքում (սենյակում, սրահում) տեխնիկական միջոցներով ավագանու նիստերին հետևելը պարունակում է ռիսկեր՝ օրինակ, նիստերի ընթացքում տեխնիկական միջոցների խափանման արդյունքում իրադարձությունները չարձանագրելու կամ փաստերի ոչ լիարժեք ֆիքսելու մասով:

Մեր համոզմամբ՝ ավագանու նիստերին լրագրողների ներկայությունը ավելի կարևոր է, քան այն շահերը, որոնց բավարարման նպատակով կատարվել է օրենքի փոփոխությունը:

Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 14.1-ին կետի<sup>2</sup> համաձայն՝ քաղաքապետը «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ

<sup>1</sup> [http://www.parliament.am/draft\\_history.php?id=9707](http://www.parliament.am/draft_history.php?id=9707)

<sup>2</sup> Ընդ որում, սա պետք է լիներ ոչ թե 14.1, այլ 14.2 կետ, այդ իսկ պատճառով նախագծում նշվում է «երկրորդ 14.1-ին կետ» բառակապակցությունը

հողվածով սահմանված կարգով հաստատում է Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններում լրագրողների հավաքարմագրման, ինչպես նաև Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպագրույցների անցկացման կարգերը: Մինչդեռ՝ «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողն իր լրագրողին հավաքարմագրելու համար իրավունք ունի դիմել պետական մարմիններ: Պետական մարմինը պարտավոր է, սույն օրենքին և տվյալ մարմնում լրագրողների հավաքարմագրման կարգին համապատասխան, հնգօրյա ժամկետում հավաքարմագրել լրագրողին:

Այսինքն, հիշյալ հոդվածը վերաբերում է պետական, այլ ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լրագրողներին հավատարմագրելուն: Հետևաբար, Երևանի քաղաքապետին հավատարմագրման լիազորություն տալը հակասում է «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածին:

Ի վերջո, Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման վերաբերյալ առանձին գլխի տեսքով դրույթների սահմանումն ինքնին վկայում է այդ ինստիտուտի և պետական կառավարման ինստիտուտի կարևոր տարբերությունների մասին:

Այսպիսով, համայնքային նշանակության հարցերի քննարկման ժամանակ ցանկացած շահագրգիռ անձ, այդ թվում՝ լրագրողները, իրավունք ունեն մասնակցելու ավագանու նիստերին՝ հետևելով քննարկումների և որոշումներ կայացնելու ընթացքին:

Ներկայացված նախագիծը մշակվել է «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության հետ միասին: